

ազգային մեծամասնութեան մը, խորունկ գիտակցութիւնն ունէին թէ օգտակար էր Հայոց պատրիարքի ձեռնարկութիւններն ու յաջողութիւնները:

Նոյն իսկ Ալուտի գրչին տակ տեսանք վերագոյն թէ ինքը գիտէ որ «եղիճ»ներ կան օտար բուրաստաններու մէջ, համեղ եւ հիւթեղ պտուղներու մէջ փտածներ ալ կը գտնուին, թէ լաւը եւ յոռին շատ անգամ քով քովի կու գան, քայց ինքը եղիճը չէ որ կ'ընտրէ փունջ մը կազմելու համար. փտածը չէ որ կը հրամցընէ իրեններուն, այլ միշտ ԼԱԻԸ:

Իրաց այս վիճակին մէջ Ալուտի Մատենադարանին նկարագիրը հաստատուն մեծութիւն մը կը շեշտէ, Գպրոցի մը գոյութիւնն ու գործունէութիւնը կ'անձնաւորէ եւ ըստ ինքեան բոլորովին նոր երեւոյթ մ'է որ կը դիտուի Պոլսոյ մէջ՝ Հայոց մտաւորական կեանքին վրայ. Պոլիս, որ հեազհեաէ կենդրոն մը պիտի բլար Հայոց մեծագոյն մէկ մասին մտաւորեւ ազգային կեանքի համար:

Ալուտի ատեն հայութիւնը երեք դարու կեանք մ'ունէր դեռ Օսմանեան մայրաքաղաքի մէջ: Ներքին գաւառներու ներկայացուցիչ բնտանիքներ կը կազմէին այդ հայութիւնը իրենց զատ բմբուռներով, իրենց զատ սովորութիւններով ու աւանդութիւններով. հասարակաց միութեան, նոյնութեան կապը Հայաստանեայց Եկեղեցին էր միայն: Սերունդներ անցած էին եւ պէտք էին անցնիլ, որպէս զի Պոլիս ալ ունենար իր ինքնութիւնը, իր նկարագիրը իբր մեծ կենդրոն մը հայութեան համար: Այդ Եկեղեցին, սակայն, տագնապներու մէջ էր, եւ իբր միութեան կապ իր ունեցած դերն ու նշանակութիւնը վտանգելու համար՝ ֆռանկութիւն մը կը տեսնէր իր առջեւ: Հաւասար միջոցներ ու զէնքեր անհրաժեշտ կերպով պէտք էին այդ վտանգին դէմ զինուելու համար: